Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր (ՈՀԱԾ)
Դրամաշնորհի No.: TF017003
Ծրագրի ID No. P147919

ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

«Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի (ՈՀԱԾ) համար վերաբնակեցման քաղաքականության շրջանակի պատրաստում»
ISMP/GR/IC/SW-14/002

Հայաստանի Հանրապետությունը 495,000 ԱՄՆ դոլար գումարի դրամաշնորհ է ստացել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի կարողությունների զարգացման բազմադոնորային վստահառուական հիմնադրամից (ԵԿԱԿԶԱՐ ՎՀ), որը ղեկավարվում է Զարգացման և վերակառուցման միջազգային բանկի/Միջազգային զարգացման ընկերակցության (“Համաշխարհային բանկ”) կողմից և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար: Դրամաշնորհի զարգացման նպատակն է բարելավել պատրաստվածությունը **Ոռոգման համակարգի արդիականացման ծրագրի (ՈՀԱԾ)** իրականացման համար, որը կֆինանսավորվի Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԲ) Հակաճգնաժամային հիմնադրամի (ՀՃՀ) կողմից:

Սույնով **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը** հրավիրում է իրավասու անձանց («խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար:

Խորհրդատվական ծառայությունների («Ծառայություններ») ընդհանուր նպատակներն են.

- ծրագրի նախապատրաստման ընդհանուր ժամանակացույցին համապատասխան (մինչև ծրագրի գնահատումը) պատրաստել «Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ» (ՎՔԾ) ՈՀԱԾ-ի համար: Պատրաստվելիք ՎՔԾ-ն պետք է արտացոլի Հայաստանի Հանրապետության օրենսդրական պահանջները, ինչպես նաև Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականությունները և ընթացակարգերը (Safeguards Policies and Procedures), մասնավորապես՝ Համաշխարհային բանկի գործառնական քաղաքականությունը հարկադիր վերաբնակեցման ոլորտում (OP/BP 4.12): Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը պարզաբանում է հողը վերցնելու և վերաբնակեցնելու սկզբունքները, իրավական շրջանակը և կազմակերպչական մեխանիզմները՝ OP/BP 4.12-ին համապատասխան: Դրանք պատրաստվում են ՈՀԱԾ-ի համար՝ նկատի առնելով, որ ծրագրի գործողությունների (այդ թվում ենթադրամաշնորհների) ճշգրիտ ազդեցությունները դեռ հայտնի չեն:

Ենթադրվում է, որ խորհրդատվական ծառայությունների պայմանագիրը կսկսվի **2014թ. հուլիսին**: Հանձնարարության տևողությունը **3 (երեք) ամիս** է՝ պայմանագրի ստորագրման պահից:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ *«Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011»* («Խորհրդատուների Ուղեցույցներ» *(Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)*), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է **“Անհատ խորհրդատուների ընտրության (Selection of Individual Consultants)” մեթոդով**, որը սահմանվում է Խորհրդատուների Ուղեցույցներում:

Խորհրդատուի որակավորումը պետք է բավարարի ստորև բերված պահանջները, բայց չսահմանափակվի դրանցով.

- առաջավոր գիտական և մասնագիտական որակավորում սոցիոլոգիայի, հողի կառավարման, ջրային ոլորտի, գյուղատնտեսության կամ համապատասխան այլ ոլորտներում:
- Համաշխարհային բանկի, կամ համանման ընթացակարգեր ունեցող ՄՖՀ-ների (օրինակ՝ Ասիական զարգացման բանկ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար վերաբնակեցման գործիքների պատրաստման հինգ տարուց ավել փորձ:
- գերադասելի է ունենալ ջրային տնտեսության/գյուղատնտեսության ոլորտների համար վերաբնակեցման գործիքների պատրաստման փորձ:
- գերադասելի է ունենալ Հայաստանի համար վերաբնակեցման գործիքների պատրաստման փորձ:
- պահանջվում է ունենալ հայերենի և անգլերենի կատարյալ իմացություն:

Խորհրդատուն պետք է կարողանա սահմանված ժամկետում գրել հակիրճ և հասկանալի հաշվետվություններ:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ ժ.10:00–17:00 (Երևանի ժամանակով), երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ, բացի պաշտոնական տոներից:

Շահագրգիռ անձինք իրենց դիմումները՝ **ինքնակենսագրական տվյալներով** (CV), հայերեն և անգլերեն լեզուներով՝ վավերացված տպագիր օրինակներով կամ էլ-փոստով՝ Adobe PDF կամ այլ ձևաչափով, կարող են ուղարկել ստորև նշված հասցեով մինչև **2014թ. հունիսի 13–ը, ժամը 17:00**:

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Պրն. Աղիբեկ Ղազարյան, տնօրեն
Պրն. Մարինե Վարդանյան, սոցիոլոգ
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, ք.Երևան 0033, Բաղրամյան պող. 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 275-475; 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ aghazaryan@wsdp.am; cc: mvardanyan@wsdp.am; mcharyan@wsdp.am;

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Մարինե Վարդանյանին՝
(374 10) 275-475; ժամը 10.00-ից մինչև 17.00-ը (աշխատանքային օրեր)